ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևաբույր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևաբույր, 098100062, jivan.manukyan.1990@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 15-Ա

ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 15 -Ա ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արևաբույր համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 06 արտահերթ նիստի օրակարգը:

1.2021թ.ի համար Արևաբույր համայնքի վարչական տարածքում տեղակ ան տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:

2. Արևաբույր համայնքի ղեկավարի աշխատավարձի չափի և համայնքա պետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի հաստիքաց ուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

3. Արևաբույր համայնքի 2021 թվականի ֆոնդային և վարչական բյուջեները հաստատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԱՐՍԵՎԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԳՍՅԱՆ ԶՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԻՎԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևաբույր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևաբույր, 098100062, jivan.manukyan.1990@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 16-Ն

ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18րդ կետի ինչպես
նաև <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդն 14-րդ հոդվածների պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

2021թ. համար Արևաբույր համայնքի վարչական տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի թույլտվության համար:

Հիմնական շենքերի և շինությունների համար

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 15000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի շինությունների համար՝

բա) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ,

բբ) 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ,

բգ) 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 դրամ,

բդ) 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 000 դրամ.

ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ:

1.2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման ուժեղացման արդիականացման և բարեկարգման համար աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

1.3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի)թույլտվության համար՝ 5000 դրամ:

1.4 Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 200 000 դրամ:

1.5 Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար 60 000 դրամ:

1.6 Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 50 000 դրամ:

1.7 Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.000դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.000 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25.000 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45.000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 60.000դրամ:

1.8 Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար:

1.9 Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար

ա) առևտրի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 500 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 1 000 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝500 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝150 000 դրամ:

1.10 Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոնների համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.000 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30.000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50.000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.000 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 դրամ:

1.11 Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 375 դրամ:

զ) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքը 150 դրամ:

1.12 Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար 100000 դրամ:

1.13 Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 դրամ.

1.14 Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 500000 դրամ:

2. Սահմանել Արևաբույր համայնքի 2020 թվականի տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը

2.1 Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու համար տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների համար փոխահատուցման վճար սահմանել՝5000դրամ

2.2Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շնարարաության թույլտվություն պահանջվող բոլոր շինարարական աշխատանքները իրակնացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանով վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումը ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 դրամ

2.3 Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքները ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայության դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 դրամ:

2.4 Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համանքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 10000 դրամ:

2.5 Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝3000 դրամ:

2.6 Համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար յուրաքանչյուր ամիս սահմանել վճար՝

ա/ կենցաղային աղբի համար յուրաքանչյուր բնակչից 100 դրամ:

բ/ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և տեղափոխման համար ըստ ծավալի 1խմ. 500 դրամ:

2.7 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար սահմանել՝ 0 դրամ:

3. Սույն որոշման 1-ին կետով սահմանված դրույքաչափերի համար կիրառել 0.5 գործակիցը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԱՐՍԵՎԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԳՍՅԱՆ ԶՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԻՎԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևաբույր համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ.Արևաբույր, (098) 80-10-62, arevabuyr.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 17 -Ն

ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 2021Թ. ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստան Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետեր, Հայաստանի Հանրապետության <<Աշխատանքային օրենսգրքի >> 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 2021թ. համար Արևաբույր համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Հավելված 1

ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

30.12.2020թ. N 17 - Ն ՈՐՈՇՄԱՆ

ԱՐԵՎԱԲՈՒՅՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 8

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը(ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	160.000

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

Համայնքի ղեկավարի տեղակալ	1	95.000

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

Աշխատակազմի քարտուղար /1.2-1 /	1	130.000
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1 /	1	105000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ / 3.2-1 /	1	104.000
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ / 3.3-1 /	1	103.000

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Գրադարանավար	1	90.000

ՏԵԽՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Պահակ	1	90.000
Հավաքարար	1	90.000
Օպերատոր	1	90.000
Անասնաբույժ	0.5	55.000

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Բաղդասարյան Հայկ

2.Գրիգորյան Արշավիր

3.Եղիազարյան Գարսևան

4.Մանուկյան Գևորգ

5.Սարգսյան Զոհրաբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևաբույր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևաբույր, 098100062, jivan.manukyan.1990@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 18-Ն

ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել ֆոնդային բյուջեի եկամուտները ըստ եկամտատեսակների հետևյալ չափով՝

1.Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից մուտք ֆոնդային բյուջեի 10898.9 հազ. ՀՀ դրամ:

2. Ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդ, որն ուղղված է ծախսերի մասին 1143.6 հազ ՀՀ դրամ:

Սահմանել Արևաբույր համայնքի 2021 թվականի ֆոնդային բյուջեից հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման հետևյալ չափով 12042.6 հազ ՀՀ դրամ:

1. 4.5.1-ասֆալտապատ բետոնյա ծածկի 5112 հոդվածով 1800.0 հազ ՀՀ դրամ:

ա) 5134 հոդվածով 200.0 հազ. ՀՀ դրամ

բ) 1-1-1 օրենսդիր և գործադիր մարմիններ 5122 հոդվածով 1000.0 հազ. ՀՀ դրամ

2. 4.3.2- գազաֆիկացում խմբի 5112 հոդվածով 1800.0 հազ ՀՀ դրամ

ա) 5134 հոդվածով 200.0 հազ ՀՀ դրամ

3. 6.4.1-արտաքին լուսավորություն խմբի 5112 հոդվածով 1800.0 հազ ՀՀ դրամ

4. մշակութային ծախսեր խմբի 5134 հոդվածով 200.0 հազ. ՀՀ դրամ:

5. Մշակութային միջոցառումներ խմբի 5112 հոդվածով 2800.0 հազ. ՀՀ դրամ:

6. Մշակութային միջոցառումներ խմբի 5134 հոդվածով 200.0 հազ. ՀՀ դրամ:

7. Ընդհանուր բնույթի ծառայություններ խմբի 5112 հոդվածով 1842.6 ՀՀ դրամ:

8. Ընդհանուր բնույթի ծառայություններ խմբի 5134 հոդվածով 200.0 հազ. ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԱՐՍԵՎԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԳՍՅԱՆ ԶՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԻՎԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևաբույր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևաբույր, 098100062, jivan.manukyan.1990@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 19-Ն

ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղականինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի 2021 թվականի բյուջեն , որը եկամուտների և ծախսերի գծով կազմում է 35699.9 հազար դրամ:

Սահմանել համայնքի վարչական բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ չափով՝

1.Հարկեր և տուրքեր ընդամենը - 3758.4 հազար դրամ

Այդ թվում

1.1 Գույքահարկ շենքերի և շինությունների համար – 78,4 հազար դրամ

ա) Ֆիզիկական անձանցից – 60,7 հազար դրամ

բ) իրավաբանական անձանցից – 17,7 հազար դրամ

1.2 Հողի հարկ այդթվում՝ – 1500,0 հազար դրամ

ա) Ֆիզիկական անձանցից – 1440,0 հազար դրամ

բ) Իրավաբանական անձանցից – 60,0 հազար դրամ

1.3 Գույքահարկ փոխադրամիջոցներից- 2000.0 հազար դրամ

1.4 Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար – 180.0 հազար դրամ

Այդ թվում տեղական տուրքեր– 180.0 հազար դրամ

ա) շինությունների շինարարության թույլտվություն հիմնական շինությունների համար – 40,0

հազար դրամ

բ) ծխախոտի վաճառքի թույլտվության համար – 60.0 հազար դրամ

գ) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար – 60.0 հազար դրամ

դ)արտաքին գովազդ- 20.0 հազարդրամ

2.1 Դոտացիա - 26482.2 հազար դրամ,որից

ա) պետ. բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիա – 30491.5 հազար դրամ

2.2 Գույքի վարձակալությունից ստացվող մուտքեր – 350,0 հազար դրամ

հողերի վարձակալության վճարներ – 350,0 հազար դրամ

2.3 Աղբահանության վճար – 1100.0 հազարդրամ

3. Սահմանել Արևաբույր համայնքի 2021թ-ի վարչական բյուջեից հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման հետևյալ չափերով՝

1) 01.1.1 օրենսդիր և գործադիր մարմիններ – 16531.0 հազար դրամ

2) 01.3.3 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ - 50,0 հազար դրամ

3) 01.6.1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ – 880,0 հազար դրամ

4) 04.5.1 ճանապարհային տրանսպորտ – 1200.0 հազար դրամ

5) 05.1.1 աղբահանում – 1700.0 հազար դրամ

6) 06.4.1 փողոցային լուսավորություն - 2400.0 հազար դրամ

7) 08.2.4 այլ մշակույթային կազմակերպություններ – 400.0 հազար դրամ

8) 09.1.1 նախադպրոցական կրթություն – 5500,0 հազար դրամ

9) 10.7.1 սոցիալական պաշտպանություն – 1600,0 հազար դրամ

10) 11.1.2 ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ -5438.9 հազար դրամ

4. Սահմանել 2021թ-ի վարչական բյուջեի հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների հետևյալ չափերով՝

ա) 4111 Աշխատավարձ – 13344.0 հազար դրամ

բ) 4211 Բանկային ծառայություն - 20.0

գ) 4212 Էներգետիկ ծառայություններ – 2100.0 հազար դրամ

դ) 4213 Կոմունալ ծառայություններ– 1500.0 հազար դրամ

ե) 4214 Կապի ծախսեր - 180,0 հազար դրամ

զ) 4221 Ներքին գործուղումներ – 0,0 հազար դրամ

է) 4232 Համակարգչային ծառայություն – 30,0 հազար դրամ

ը) 4234 Տեղեկատվություն – 120,0 հազար դրամ

թ) 4239 Ընդհանուր բնույթի ծառայություններ -200.0 հազար դրամ

ժ) 4241 Մասնագիտական ծառայություններ -- 0 .0 հազար դրամ

ի) 4251 Շենքերի և շինությունների կառուցում և պահպանում – 1000.0 հազար դրամ

լ) 4252 Մեքենաների ընթացիկ նորոգում – 1300.0 հազար դրամ

խ) 4261 Գրասենյակային նյութեր – 200,0 հազար դրամ

ծ) 4264 Տրանսպորտային նյութեր – 1100,0 հազար դրամ

կ) 4267 Կենցաղայինև տնտեսական նյութեր – 100,0 հազար դրամ

հ) 4269 Հատուկ նպատակային նյութեր – 400,0 հազար դրամ

ձ) 4819 Նվիրատվություններ շահույթ չհետապնդող կազմակերպություններին – 400,0 հազար դրամ

ղ) 4726 Հուղարկավորության նպաստներ – 600,0 հազար դրամ

ճ) 4729 Այլ նպաստներ –1000.0 հազար դրամ

մ) 4637 Դրամաշնորհներ - 5500.0

յ) 4891 Պահուստային միջոցներ - 5438.9 հազար դրամ :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԱՐՍԵՎԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԳՍՅԱՆ ԶՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՋԻՎԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**